

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

22 հուլիսի 2022թ.
ք.Երևան

N 52-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵԲԵՐԻ 25-Ի
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ
ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք»
Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ
մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2022 թվականի սեպտեմբերի 25-ի
տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և
անցկացման լիազորությունը վերապահել թիվ 24 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ.Մուկուչյան